

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«ՔԱՐԴ ԱգրոԿրեդիտ» ունիվերսալ վարկային կազմակերպություն  
փակ բաժնետիրական ընկերության միակ բաժնետեր

«ԱԳՐՈՎԻԺՆ» փակ բաժնետիրական ընկերության տնօրենների խորհրդի  
կողմից

Գագիկ Սարգսյան



APPROVED by the Board of Directors of  
“AGROVISION” Closed Joint-Stock Company  
Represented by

Gagik Sardaryan



ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀՀ Կենտրոնական բանկում

ՀՀ Կենտրոնական բանկի նախագահ

Մ. Գալստյան

REGISTERED by

Central Bank of the Republic of Armenia

Chairman of the Central Bank of the Republic of Armenia

M. Galstyan

| Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն<br>«ՔԱՐԴ ԱԳՐՈԿՐԵԴԻՏ» ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ<br>ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ<br>ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                             | Articles of Association<br>“CARD AgroCredit” UNIVERSAL CREDIT ORGANIZATION CLOSE<br>JOINT STOCK COMPANY                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                    |
|------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| <p>ՀԱՍՏԱՏՎԱԾ Է<br/>«ԱԳՐՈՔԻԶՆԵՍԻ ԵՎ ԳՅՈՒՂԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ<br/>ԽՈՐՀՐԴԻ 22/04/2008թ թիվ 7 որոշմամբ, Գրանցված է ՀՀ ԿԲ 27/06/2008թ<br/>գրանցման թիվ 23</p> <p>ՓՈՓՈԽՎԱԾ Է<br/>«ԱԳՐՈՔԻԶՆԵՍԻ ԵՎ ԳՅՈՒՂԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ<br/>ԽՈՐՀՐԴԻ 25/05/2010թ թիվ 29 որոշմամբ, Գրանցված է ՀՀ ԿԲ 16/07/2010թ գրանցման<br/>թիվ 1/772 Ա</p> <p>«ԱԳՐՈՔԻԶՆԵՍԻ ԵՎ ԳՅՈՒՂԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ<br/>ԽՈՐՀՐԴԻ 15/12/2010թ թիվ 30 որոշմամբ, Գրանցված է ՀՀ ԿԲ 21/02/2011թ գրանցման<br/>թիվ 1/158 Ա</p> <p>«Ագրովիժն» Բ.Վ. Կառավարման խորհրդի 24/03/2014թ թիվ 1 որոշմամբ</p> <p>«Ագրովիժն» Բ.Վ. Կառավարման խորհրդի 27/05/2019թ թիվ 1 որոշմամբ, Գրանցված է ՀՀ ԿԲ<br/>03/07/2019թ</p> <p>«ԱԳՐՈՎԻԺՆ» փակ բաժնեպիրական ընկերության տնօրենների խորհրդի կողմից 27/06/2023թ թիվ 03<br/>որոշմամբ, Գրանցված է ՀՀ ԿԲ-ում 30/08/2023թ.</p> <p>«ԱԳՐՈՎԻԺՆ» փակ բաժնեպիրական ընկերության տնօրենների խորհրդի կողմից 16/09/2024թ թիվ 2<br/>որոշմամբ</p> <p>«ՔԱՐԴ ԱգրոԿրեդիտ» ՈւՎԿ ՓԲԸ բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովի կողմից 30/06/2025թ.<br/>թիվ 4 որոշմամբ</p> | <p>APPROVED by<br/>“Center for Agribusiness and Rural Development” Foundation Board of Trustees Decree # 7 by<br/>22/04/2008, Registered by CBA 27/06/2008 decree # 23</p> <p>REVUISED by<br/>“Center for Agribusiness and Rural Development” Foundation Board of Trustees Decree # 29 by<br/>25/05/2010, Registered by CBA 16/07/2010 decree # 1/772 A</p> <p>“Center for Agribusiness and Rural Development” Foundation Board of Trustees Decree # 30 by<br/>15/12/2010, Registered by CBA 21/02/2011 decree # 1/158 A</p> <p>“Agrovision” B.V. Management Board Decree # 1 by 24/03/2014</p> <p>“Agrovision” B.V. Management Board Decree # 1 by 27/05/2019, Registered by CBA 03/07/2019</p> <p>“AGROVISION” Closed Joint-Stock Company, Board of Directors, Decree # 03 by<br/>27/06/2023, Registered by CBA 30/08/2023</p> <p>“AGROVISION” Closed Joint-Stock Company, Board of Directors, Decree # 2 by<br/>16/09/2024</p> <p>“CARD AgroCredit” UCO CJSC shareholders general assembly at 30.06.2025, decree N4</p> |

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1 «Քարդ ԱգրոԿրեդիտ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ «Ընկերություն») հանդիսանում է շահույթ ստանալու նպատակով հիմնադրված առևտրային կազմակերպություն հանդիսացող վարկային կազմակերպություն, որի կանոնադրական կապիտալը բաժանված է Ընկերության նկատմամբ բաժնետերերի պարտավորական իրավունքը հավաստիացնող որոշակի թվով բաժնետոմսերի:
- 1.2 Ընկերությունն իրավաբանական անձ է և ունի իր բաժնետերերի գույքից առանձնացված գույք, որը հաշվառվում է ինքնուրույն հաշվեկշռում:
- 1.3 Ընկերությունն իրավունք ունի իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:
- 1.4 Ընկերությունն իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող ամբողջ գույքով:
- 1.5 Ընկերությունն պատասխանատու չէ իր բաժնետերերի պարտավորությունների համար:
- 1.6 Ընկերության բաժնետերերը պատասխանատվություն չեն կրում նրա պարտավորությունների համար և իրենց պատկանող բաժնետոմսերի արժեքի սահմաններում կրում են Ընկերության գործունեության հետ կապված վնասների ռիսկը:
- 1.7 Ընկերության իրավունակությունը ծագում է նրա ստեղծման (Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկում գրանցվելու պահից պետական գրանցման) և դադարում է լուծարման ավարտի (լուծարման մասին պետական գրանցամատյանում գրանցման) պահից:
- 1.8 Ընկերությունը ունի իր ֆիրմային անվանմամբ կլոր կնիք (հայերեն, ռուսերեն և անգլերեն), դրոշմներ և բլանկներ, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով գրանցված խորհրդանիշ, ապրանքային և այլ նշանների ու ֆիրմային ռեկվիզիտներ:
- 1.9 Ընկերությունը իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով (այսուհետ՝ «Օրենսգրք»), «Վարկային կազմակերպությունների մասին» և «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, այլ նորմատիվ իրավական ակտերով, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետ՝ «Կենտրոնական բանկ») նորմատիվ իրավական ակտերով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ:
- 1.10 Ընկերության բաժնետերերի և Ընկերության միջև հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ:
- 1.11 Եթե Ընկերության անվճարունակության (սնանկության) պատճառ է հանդիսանում բաժնետերերի կամ այլ անձանց գործունեությունը (անգործությունը), որոնք ունեն Ընկերությանը կատարման համար պարտադիր ցուցումներ տալու իրավունք կամ

## 1. GENERAL PROVISIONS

- 1.1 “CARD AgroCredit” Universal Credit Organization Closed Joint Stock Company (hereinafter referred as to the “**Company**”) is a commercial credit institution, the statutory capital of which is split into a specified number of shares certifying the responsible rights of shareholders in respect to the Company.
- 1.2 The Company is a legal entity and has property separated from that of its shareholders, which is accounted on its independent balance sheet.
- 1.3 The Company is entitled on its own behalf to acquire and exercise property and personal non-property rights, assume obligations, act as a plaintiff or a defendant at the court of law.
- 1.4 The Company shall be responsible for its liabilities with its whole assets.
- 1.5 The Company shall not be responsible for the liabilities of its shareholders.
- 1.6 The Company shareholders shall not be responsible for the Company’s liabilities and shall bear the risk of losses associated with the Company activities to the extent of value of their shares.
- 1.7 The legal status of the Company shall be established upon its state registration (with the Central Bank of Armenia) and terminated upon its state registration of liquidation.
- 1.8 The Company shall have a round seal (Armenian, Russian and English), stamps and blanks with its firm name, as well as a logo, trademark and other requisites registered in accordance with the procedures defined by the law.
- 1.9 In its activity, the Company shall be guided by the Civil Code of the Republic of Armenia (hereinafter referred as to the “**Code**”), the Law of the Republic of Armenia on Credit Organizations and on Joint Stock Companies, other laws, Prudential standards of the Central Bank of the Republic of Armenia (hereinafter referred as to the “**Central Bank**”), other legal acts and this Articles of Incorporation.
- 1.10 Relations between the Company and its shareholders are regulated by the legislation of the Republic of Armenia and these Articles of Incorporation.
- 1.11 If the insolvency (bankruptcy) of the Company is caused by the actions (failure to act) of the shareholders or other persons who either have the right to give instructions binding upon the Company, or otherwise have possibility to predetermine the actions of the Company, then these shareholders or other persons may be exposed to additional

Ընկերության գործունեությունն այլ կերպ կանխորոշելու հնարավորություններ, ապա Ընկերությանը պատկանող գույքը չբավարարելու դեպքում այդ բաժնետերերի կամ այլ անձանց վրա կարող է դրվել լրացուցիչ (ուբսիդիար) պատասխանատվություն՝ Ընկերության պարտավորությունների համար:

- 1.12 Սույն կանոնադրության 1.11 կետում նշված բաժնետերերի կամ այլ անձանց գործողությունները (անգործությունը) համարվում են Ընկերության անվճարունակության (սնանկության) պատճառ միայն այն դեպքում, եթե նրանք օգտագործել են իրենց այդ իրավունքը կամ հնարավորությունները Ընկերությանը որոշակի գործողություններ կատարել կամ չկատարել պարտադրելու նպատակով, նախօրոք իմանալով, որ այդ պատճառով Ընկերությունը կհայտնվի անվճարունակության (սնանկության) վիճակում:
- 1.13 Հայաստանի Հանրապետությունը և համայնքները պատասխանատվություն չեն կրում Ընկերության պարտավորությունների համար: Ընկերությունն իր հերթին պատասխանատվություն չի կրում Հայաստանի Հանրապետության և համայնքների պարտավորությունների համար:
- 1.14 Ընկերության ֆիրմային անվանումն է՝

հայերեն լրիվ՝ «ՔԱՐԴ ԱգրոԿրեդիտ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերություն  
կրճատ՝ ՔԱՐԴ ԱգրոԿրեդիտ  
ռուսերեն լրիվ՝ “КАРД АгроКредит” универсальная кредитная организация закрытое акционерное общество  
կրճատ՝ КАРД АгроКредит  
անգլերեն լրիվ՝ “CARD AgroCredit” universal credit organisation closed joint stock company  
կրճատ՝ CARD AgroCredit

- 1.15 Ընկերության գտնվելու վայրի և իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Ազատության փողոց 1/21, 40:
- 1.16 Ընկերությունն ստեղծվում է առանց ժամկետի սահմանափակման:
- 1.17 Ընկերության հիմնադիր փաստաթուղթը սույն կանոնադրությունն է:
- 1.18 Սույն կանոնադրության պահանջները պարտադիր են Ընկերության բաժնետերերի և բոլոր մարմինների համար:
- 1.19 Սույն կանոնադրության մեջ լրացումներ և փոփոխությունները կատարելը, ինչպես նաև կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելը կատարվում է ժողովի որոշմամբ, որն ընդունվում է դրան մասնակցած՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի կամ անվանատերերի ձայների 3/4-ով, իսկ կանոնադրական կապիտալի ավելացման դեպքում՝ ժողովին մասնակցած՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի կամ անվանատերերի ձայների մեծամասնությամբ կամ հորիզոնի միաձայն որոշմամբ:

## 2. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ՈՒ ՆՊԱՏԱԿԸ

(subsidiary) responsibilities for the Company’s liabilities if the Company’s own assets are insufficient.

- 1.12 The action (failure to act) of shareholders or other persons stated in the clause hereof shall be deemed causes to Company insolvency (bankruptcy) only if they used their rights or opportunities to compel the Company to carrying out or refraining from carrying out certain activities, knowing in advance that it would lead the Company to a state of insolvency (bankruptcy).
- 1.13 The Republic of Armenia and its communities shall not be responsible for the liabilities of the Company. Likewise, the Company shall not be responsible for the liabilities of the Republic of Armenia and its communities.
- 1.14 The firm name of the Company is:

**full name in Armenian:** «ՔԱՐԴ ԱգրոԿրեդիտ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերություն  
**abbreviated name:** ՔԱՐԴ ԱգրոԿրեդիտ  
**full name in Russian:** “КАРД АгроКредит” универсальная кредитная организация закрытое акционерное общество  
**abbreviated name:** КАРД АгроКредит  
**full name in English:** “CARD AgroCredit” universal credit organization closed joint stock company  
**abbreviated name:** CARD AgroCredit

- 1.15 The location and legal address of the Company is 1/21, 40 Azatutyan Street, Yerevan, Armenia.
- 1.16 The Company is established without any time limitation.
- 1.17 The founding document of the Company is the Articles of Incorporation.
- 1.18 The requirements of the Articles of Incorporation are binding upon all the shareholders and all the bodies of the Company.
- 1.19 Amendments to the Articles of Incorporation, as well as the approval of the new edition of the Charter shall be carried out by a decision of the Meeting, which is adopted by a  $\frac{3}{4}$  vote of the shareholders or owners of voting shares participating in the Meeting, and if the statutory capital is being increased, then by either a majority vote of the shareholders or owners of voting shares in the Meeting, or by a unanimous decision of the Board.

## 2. PURPOSE AND SUBJECT OF THE COMPANY ACTIVITY

- 2.1 Ընկերության ստեղծման նպատակն է վարկային կազմակերպության գործունեություն իրականացնելու ճանապարհով շահույթի ստացումը:
- 2.2 Կենտրոնական բանկի կողմից տրված վարկային կազմակերպության գործունեության լիզենզիայի հիման վրա Ընկերությունը իրականացնում է հետևյալ ֆինանսական գործառնությունները.
  - 2.2.1 ներգրավել փոխառություններ և (կամ) կնքել նմանատիպ գործարքներ,
  - 2.2.2 տրամադրել վարկեր, փոխառություններ, իրականացնել պարտքի կամ առևտրային գործարքների ֆինանսավորում, ֆակտորինգ,
  - 2.2.3 տրամադրել երաշխիքներ,
  - 2.2.4 թողարկել արժեթղթեր, ինչպես նաև իր հաշվին և իր անունից արժեթղթերով գործարքներ կատարել,
  - 2.2.5 մատուցել վարկային կազմակերպության գործունեության հետ կապված վճարահաշվարկային ծառայություններ,
  - 2.2.6 մատուցել ֆինանսական գործակալի (ներկայացուցչի) ծառայություններ, կառավարել այլ անձանց ներդրումները, իրականացնել հավատարմագրային (լիազորագրային) կառավարում,
  - 2.2.7 գնել և վաճառել արտադրույթ, այդ թվում՝ կնքել դրամի և արտադրույթի ֆյուչերսներ, օպցիոններ և նման այլ գործարքներ,
  - 2.2.8 իրականացնել ֆինանսական վարձակալություն (լիզինգ),
  - 2.2.9 ի պահ ընդունել թանկարժեք մետաղներ, քարեր, ոսկերչական իրեր, արժեթղթեր, փաստաթղթեր և այլ արժեքներ,
  - 2.2.10 մատուցել ֆինանսական խորհրդատվություն,
  - 2.2.11 ստեղծել և սպասարկել հաճախորդների վարկարժանության տեղեկատվական համակարգ, իրականացնել պարտքերի հետ ստացման գործունեություն,
  - 2.2.12 Կենտրոնական բանկի համաձայնությամբ իրականացնել վարկային կազմակերպություններին բնորոշ միջազգային պրակտիկայում ընդունված գործառնություններ:
- 2.3 Ընկերությունը կարող է ստեղծել և սպասարկել հաճախորդների վարկարժանության տեղեկատվական համակարգ:
- 2.4 Ընկերությունը կարող է սպառողական վարկեր կամ փոխառություններ տրամադրել Կենտրոնական բանկի սահմանած կարգով և պայմաններով, ինչպես նաև դրա հիման վրա ընդունված վարկային կազմակերպության ներքին իրավական ակտերով:
- 2.5 Ընկերությունը ֆինանսական գործառնությունները իրականացնում է անկանխիկ եղանակով:

### 3. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐՆ ՈՒ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԶՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- 3.1 Ընկերությունն իրավունք ունի «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և դրա հիման վրա ընդունված Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերին համապատասխան ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ՝ մասնաճյուղեր և ներկայացուցչություններ:

- 2.1 The objective of the Company is to obtain profit by carrying out activity of the credit organization.
- 2.2 The license granted by the Central Bank of Armenia shall empower the Company to carry out the following financial operations:
  - 2.2.1 attract borrowings and/or conclude alike transactions;
  - 2.2.2 extend credits, loans, provide debt or commercial transaction financing, and factoring;
  - 2.2.3 provide guarantees;
  - 2.2.4 issue securities, as well as make transactions with securities on its own behalf;
  - 2.2.5 provide payment services related to the activities of the credit organization
  - 2.2.6 provide financial agent (representative) services, manage investments of other persons, carry out accredited (authorized) management;
  - 2.2.7 purchase and sell foreign currency, including Dram and foreign exchange futures, options and other alike transactions;
  - 2.2.8 undertake financial leasing;
  - 2.2.9 accept on deposit precious metals, stones, jewelers, securities, documents and other valuables;
  - 2.2.10 provide financial consultancy;
  - 2.2.11 create and operate an information system for customer creditworthiness, and undertake debt collection activity;
  - 2.2.12 On the Central Bank's consent undertake internationally practiced credit organization operations.

- 2.3 The Company may create and administer customers credit information system.

- 2.4 The Company may provide consumer credits and loans as regulated by the Central Bank, as well as internal legal acts of the Company based thereon.

- 2.5 The Company provides financial services on non-cash process.

### 3. BRANCHES AND REPRESENTATIVE OFFICES OF THE COMPANY

- 3.1 The Company is entitled to establish separated subdivisions (branches and representative offices) in compliance with the Law of the Republic of Armenia on Credit Organizations and legal acts of the Central Bank.
- 3.2 Decisions on establishing separated subdivisions of the Company shall be adopted by the Board of Directors of the Company (hereinafter referred as to the “**Board**”).

- 3.2 Ընկերության առանձնացված ստորաբաժանումների հիմնադրման մասին որոշումներն ընդունվում են Ընկերության Խորհրդի (այսուհետ՝ «Խորհուրդ») կողմից:
- 3.3 Մասնաճյուղի և ներկայացուցչության ղեկավարները նշանակվում են Ընկերության կողմից և գործում են վերջինիս տված լիազորագրերի հիման վրա:
- 3.4 Մասնաճյուղերը և ներկայացուցչությունները գործում են Ընկերության անունից: Մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գործունեության համար պատասխանատվությունը կրում է Ընկերությունը:

#### **4. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ**

- 4.1 Կանոնադրական կապիտալը կազմվում է բաժնետերերի ձեռք բերած բաժնետոմսերի անվանական արժեքից:
- 4.2 Կանոնադրական կապիտալը որոշում է նրա պարտատերերի շահերը երաշխավորող Ընկերության գույքի նվազագույն չափը:
- 4.3 Ընկերությունը կարող է իր որոշմամբ փոփոխել կանոնադրական կապիտալի չափը: Կանոնադրական կապիտալի փոփոխման կարգը սահմանվում է «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և սույն կանոնադրությամբ:
- 4.4 Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 759,200,000 (յոթ հարյուր հիսունինը միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ, որը բաղկացած է 584,000 (հինգ հարյուր ութսունչորս հազար) հատ հասարակ (սովորական) բաժնետոմսերից, յուրաքանչյուրը՝ 1,300 (հազար երեք հարյուր) ՀՀ դրամ անվանական արժեքով:

#### **5. ՀԱՍԱՐԱԿ (ՍՈՎՈՐԱԿԱՆ) ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

- 5.1 Հասարակ (սովորական) բաժնետոմսի սեփականատերը «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի և սույն կանոնադրության համաձայն իրավունք ունի՝
- ա) մասնակցել ժողովի՝ վերջինիս իրավասությանը պատկանող բոլոր հարցերի նկատմամբ ձայնի իրավունքով.
  - բ) մասնակցել Ընկերության կառավարմանը.
  - գ) ստանալ շահութաբաժիններ՝ Ընկերության գործունեությունից առաջացած շահույթից.
  - դ) առաջնահերթ կարգով ձեռք բերել Ընկերության կողմից տեղաբաշխվող բաժնետոմսերը, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ.
  - ե) ստանալ Ընկերության գործունեության վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն՝ գաղտնի փաստաթղթերից բացի, այդ թվում՝ կանոնադրությամբ սահմանված կարգով, ծանոթանալ հաշվապահական հաշվեկշիռներին, հաշվետվություններին.
  - զ) ժողովներում իր իրավունքները ներկայացնելու համար լիազորել երրորդ անձի.

- 3.3 Managers of the branches and representative offices shall be appointed by the Company and shall operate on the basis a power of attorney issued by the Company.
- 3.4 Ranches and representative offices shall operate in the name of the Company. The Company shall bear responsibility for the activities of the branches and representative offices.

#### **4. STATUTORY CAPITAL OF THE COMPANY**

- 4.1 The statutory capital shall comprise the nominal value of the shares acquired by the shareholders.
- 4.2 The statutory capital shall determine the minimum amount of the Company property guaranteeing the interests of its creditors.
- 4.3 The Company may change the amount of the statutory capital by the agreement of the Meeting. The procedure of changing the amount of the statutory capital is defined by the Law of Republic of Armenia on Joint Stock Companies and this Articles of Incorporation.
- 4.4 The Company has a statutory capital equal to 759,200,000 (Seven hundred fifty-nine million two hundred thousand) Armenian drams divided into 584,000 (Five hundred eighty-four thousand) ordinary shares with par value of 1,300 (one thousand three hundred) Armenian drams each.

#### **5. RIGHTS AND OBLICATIONS OF THE SHAREHOLDERS OF THE ORDINARY (EQUITY) SHARES**

- 5.1 According to the Law on Joint Stock Companies and this Charter the owner of an ordinary (equity) share has the right to:
- a) participate in the Meeting with the right to vote on all the issues of its competence;
  - b) participate in the management of the Company;
  - c) receive dividends from the Company profit;
  - d) acquire shares allocated by the Company on the priority basis, unless otherwise stipulated by the Law;
  - e) receive any information on the activities of the Company, except for confidential documents, including the access to the balance sheet, reports according to the procedures defined by the Charter;
  - f) authorize a third person to present his/her rights at meeting;
  - g) make proposals at meetings;
  - h) have a vote at meetings equivalent to the amount of votes of shares owned by him;
  - i) appeal to the court against decisions of the Meeting that contradict acting laws and other legal acts;
  - j) in case of Company liquidation, receive his part of its property;
  - k) enjoy other rights defined by the Law and this Articles of Incorporation.

- է) հանդես գալ առաջարկություններով ժողովներում.
  - ը) ժողովներում քվեարկել իրեն պատկանող բաժնետոմսերի ձայների չափով.
  - թ) դիմել դատարան՝ ժողովի կողմից ընդունված և գործող օրենքներին և այլ իրավական ակտերին հակասող որոշումների բողոքարկման նպատակով.
  - ժ) Ընկերության լուծարման դեպքում ստանալ Ընկերության գույքի իր հասանելիք մասը.
  - ժա) ունենալ օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներ:
- 5.2 Հասարակ (սովորական) բաժնետոմսերի սեփականատիրոջ չի կարող տրամադրվել նրան պատկանող հասարակ (սովորական) բաժնետոմսերի անվանական արժեքից և քանակից չբխող լրացուցիչ ձայնի իրավունք:
- 5.3 Հասարակ (սովորական) բաժնետոմսերի դիմաց շահութաբաժինների վճարումներն Ընկերության կողմից չեն երաշխավորվում:
- 5.4 Հասարակ (սովորական) բաժնետոմսերի սեփականատերերը պարտավոր են չհրապարակել Ընկերության գործունեության վերաբերյալ գաղտնիք ներկայացնող տեղեկությունները: Գաղտնիք ներկայացնող տեղեկությունների ցանկը սահմանում է Խորհուրդը:
- 5.5 Ընկերության բաժնետոմսերի և բաժնետոմսերի փոխարկվող արժեթղթերի տեղաբաշխման դեպքերում Ընկերության բաժնետերերի շահերը ապահովվում են «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 47-րդ հոդվածով սահմանված կարգով և պայմաններով:

#### 6. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

- 6.1 Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը (այսուհետ՝ «Ժողով») Ընկերության կառավարման բարձրագույն մարմինն է:
- 6.2 Ընկերությունը պարտավոր է ամեն տարի գումարել բաժնետերերի տարեկան ժողով:
- 6.3 Տարեկան ժողովը գումարվում է ոչ ուշ, քան Ընկերության հերթական ֆինանսական տարվա ավարտից հետո՝ վեց ամսվա ընթացքում:
- 6.4 Տարեկան ժողովից բացի գումարվող ժողովները համարվում են արտահերթ: Արտահերթ ժողովները գումարվում են անհետաձգելի հարցերի քննարկման համար:
- 6.5 Ժողովի անցկացման տարին, ամիսը, ամսաթիվը և կարգը, ինչպես նաև բաժնետերերին ժողովի անցկացման մասին ծանուցման կարգը, բաժնետերերին տրամադրվող նյութերի ցանկը սահմանում է Խորհուրդը՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան:
- 6.6 Ժողովի իրավասությանն են պատկանում՝
- ա) կանոնադրության հաստատումը, դրանում փոփոխությունների և լրացումների կատարումը, կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ, բացառությամբ կանոնադրության 12.2 թ) ենթակետով նախատեսված դեպքերի.
  - բ) Ընկերության վերակազմակերպումը,
  - գ) Ընկերության լուծարումը,

- 5.2 The holder of ordinary (equity) shares may not be granted an additional voting right that is inconsistent with the nominal value and quantity of ordinary (equity) shares owned by him/her.
- 5.3 The Company does not guarantee the payment of dividends for ordinary (equity) shares.
- 5.4 Holders of ordinary (equity) shares shall refrain from disclosing confidential information on the activities of the Company. The Board shall define the list of confidential information.
- 5.5 In case of allocation of the Company shares and securities convertible into shares, the interests of the Company shareholders are protected by the procedure and conditions defined by the Article 47 of the Law of the Republic of Armenia on Joint Stock Companies.

#### 6. GENERAL MEETING OF SHAREHOLDERS OF THE COMPANY

- 6.1 The General Meeting of the Company Shareholders (hereinafter referred as to the “Meeting”) is the highest management body of the Company.
- 6.2 The Company shall hold annual general meeting of shareholders.
- 6.3 The annual meeting shall be held not later than within six months after the end of the financial year of the Company.
- 6.4 Meetings other than the annual meeting are considered to be extraordinary meetings. Extraordinary meetings are held to discuss urgent issues.
- 6.5 The date and procedure for conducting the Meeting, as well as the procedure for communicating to shareholders the conducting thereof, and the list of materials to be provided to shareholders shall be established by the Board in accordance with the requirements of the Law Republic of Armenia on Joint Stock Companies.
- 6.6 The following issues shall be within the competence of the Meeting:
- a) approval of the Charter, making amendments thereto, and approval of a new edition of the Charter, except for the cases provided for in subclause 12.2 of the Charter:
  - b) reorganization of the Company;

դ) ամփոփ, միջանկյալ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը, լուծարման հանձնաժողովի նշանակումը,

ե) Խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը: Խորհրդի քանակական կազմի հաստատման և դրա անդամների ընտրության հարցերը քննարկվում են բացառապես տարեկան ժողովներում: Խորհրդի անդամների ընտրության հարցն արտահերթ ժողովում կարող է քննարկվել, եթե վերջինիս որոշում է ընդունել Խորհրդի կամ նրա առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին,

զ) հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը,

է) կանոնադրական կապիտալի չափի փոփոխությունը,

ը) Ընկերության աուդիտն իրականացնող անձի հաստատումը,

թ) Ընկերության տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթների և վնասների հաշվի, շահույթների և վնասների բաշխման հաստատումը, տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը,

թա) «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 47-րդ հոդվածի 3-րդ մասի համապատասխան Ընկերության բաժնետոմսերի կամ բաժնետոմսերի փոխարկվող Ընկերության այլ արժեթղթերի Ընկերության բաժնետերերի նախապատվության իրավունքը չկիրառելու մասին որոշման ընդունումը,

թբ) ժողովի վարման կարգի սահմանումը,

թգ) հաշվիչ հանձնաժողովի ձևավորումը,

թդ) բաժնետոմսերի համախմբումը (կոնսոլիդացիան), բաժանումը,

թե) գործարքների կնքման մասին որոշման ընդունումը՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության մասին օրենքի 64-րդ հոդվածով նախատեսված դեպքերում,

թե) գործարքների կնքման մասին որոշման ընդունումը՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության մասին օրենքի 61-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերում,

թը) Ընկերության խորհրդի նախագահի և խորհրդի անդամների աշխատանքի վարձատրության պայմանների որոշում,

իդ) «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության մասին օրենքով, այլ օրենքներով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ որոշումների ընդունումը,

6.7 Սույն կանոնադրության 6.6 կետով սահմանված հարցերով որոշումների ընդունումը վերապահվում է ժողովի բացառիկ իրավասությանը և չի կարող փոխանցվել Խորհրդին կամ գործադիր մարմնին, բացառությամբ «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության մասին օրենքով նախատեսված դեպքերի:

6.8 Ժողովն իրավունք չունի քննարկելու և որոշումներ ընդունելու այն հարցերի վերաբերյալ, որոնք օրենքի համաձայն և Ընկերության կանոնադրությամբ չեն սահմանվել որպես ժողովի իրավասություն:

c) liquidation of the Company

d) approval of the final, interim, and liquidation balance sheets, and appointment of Liquidation Commission;

e) approval of the quantitative composition of the Board, election of its members and early termination of their powers, issues related to the quantitative composition of the Board and the election of its members shall be discussed exclusively at the annual meeting. Election of the Board members may be discussed at extraordinary meetings if the Board has made decision on early termination of the authorities of the Board or its member;

f) determination of the maximum amount of declared shares;

g) Change of the charter capital amount ;

h) approval of the Auditor of the Company;

i) approval of the annual reports of the Company, its accounting statements, profit and loss accounts, distribution of profits and losses, as well as adoption of a decision on the payment of annual dividends and determination of the annual dividend amount;

j) according to the part 3 of the Article 47 of the Law of the Republic of Armenia on Joint Stock Companies, adoption of a decision on waiving the preemption right of the shareholders owning Company shares or other securities convertible to shares;

k) determination of the procedure for conduction the Meeting;

l) appointment of a Counting Commission;

m) consolidation and splitting of shares;

n) conclusion of transactions in case provided by the Article 64 of the Law of the Republic of Armenia on Joint Stock Companies; conclusion of transactions in cases provided by the part 2 of the Article 61 of the Law of the Republic of Armenia on Joint Stock Companies;

o) Determination of the remuneration terms for the Chairman and members of the Board of Directors of the Company;

p) adoption of other decisions defined by the Law of the Republic of Armenia on Joint Stock Companies and this Charter;

6.7 Adoption of decisions referred to in the clause 6.6 hereof shall be assigned to the exclusive right of the Meeting and cannot be transferred to the Board or the Executive Director, except for the cases provided by the Law of the Republic of Armenia on Joint Stock Companies;

6.8 The General Meeting does not have the right to discuss or make decisions on matters that are not defined by law or the Company's Charter as within its authority.

## 7. DECISIONS OF THE MEETING

7.1 Except for the cases provided by the Law of the Republic of Armenia on Joint Stock Companies, the shareholders of ordinary (equity) shares have a voting right at the Meeting;

## **7. Ժողովի որոշումները**

- 7.1 Բացառությամբ «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության մասին օրենքով սահմանված դեպքերի ժողովում ձայնի իրավունքից օգտվում են Ընկերության հասարակ (սովորական) բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը:
- 7.2 Ժողովի որոշումներն ընդունվում են ժողովին մասնակցող՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների պարզ մեծամասնությամբ, եթե «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության մասին օրենքով և սույն կանոնադրությամբ ձայների ավելի շատ քանակ սահմանված չէ:
- 7.3 «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության մասին օրենքի 67-րդ հոդվածի 1-ին կետի «2», «14», «18» ենթակետերում թվարկված հարցերով որոշումներն ընդունում է ժողովը՝ միայն Խորհրդի ներկայացմամբ:
- 7.4 «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության մասին օրենքի 67-րդ հոդվածի 1-ին կետի «1» (բացառությամբ կանոնադրության 12.2 թ) ենթակետով նախատեսված դեպքերի) «2», «4», «6» և «19» ենթակետերում թվարկված հարցերով որոշումներն ընդունում է ժողովը՝ դրան մասնակցող՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ով:
- 7.5 «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության մասին օրենքի 67-րդ հոդվածի 1-ին կետի «3» և «7» ենթակետերում սահմանված հարցերով որոշումներն ընդունում է ժողովը՝ դրան մասնակցող՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ով, սակայն ոչ պակաս քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 2/3-ից:
- 7.6 Ժողովի վարման կարգի մասին որոշումներ ընդունելու կարգը սահմանվում է ժողովի հաստատած ներքին փաստաթղթերով:
- 7.7 Ժողովն իրավունք չունի փոփոխել օրակարգը, ինչպես նաև որոշումներ ընդունել օրակարգում չընդգրկված հարցերի վերաբերյալ:
- 7.8 Ժողովի ընդունած որոշումների մասին տեղեկությունները, ինչպես նաև քվեարկության արդյունքները պետք է ներկայացվեն Ընկերության բաժնետերերին «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության մասին օրենքով սահմանված կարգով և ժամկետներում՝ այդ որոշումներն ընդունելու պահից՝ 45 օրվա ընթացքում:

## **8. Ժողովի մասնակցեցնողի կարգը**

- 8.1 Ժողովին մասնակցելու իրավունք ունեն Ընկերության հասարակ (սովորական) բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը (անվատերերը)՝ իրենց պատկանող բաժնետոմսերի քանակին և անվանական արժեքին համապատասխան ձայների քանակով, Ընկերության բաժնետեր չհանդիսացող Խորհրդի և գործադիր մարմնի անդամները՝ Խորհրդակցության ձայնի իրավունքով, Ընկերության վերստուգողը, Ընկերության աուդիտի իրականացնող անձը (եթե նրա եզրակացությունն առկա է գումարվող ժողովի նյութերում):

- 7.2 Meeting decisions shall be adopted by a simple majority of votes of owners of voting shares participating in the Meeting, unless a larger number of votes is stipulated by the Law of the Republic of Armenia on Joint Stock Companies and this Charter;
- 7.3 Decisions with regard to the issues specified in the sub-clauses (b), (m), (p), (q) of the clause 1 of the Article 67 of the Law of the Republic of Armenia on Joint Stock Companies shall be adopted by the Meeting only upon the proposal of the Board;
- 7.4 Decisions with regard to the issues specified in the sub-clauses (a) (except for the cases provided for in subparagraph 12.2 h) of the statute), (b), (d), (f) and (s) of the clause 1 of the Article 67 of the Law of the Republic of Armenia on Joint Stock Companies shall be adopted by the Meeting by a ¾ vote of the owners of voting shares participating in the Meeting;
- 7.5 Decisions with regard to the issues specified in the sub-clause (c) and (h) of the clause 1 of the Article 67 of the Law of the Republic of Armenia on Joint Stock Companies shall be adopted by the Meeting by 3/4s vote of the owners of voting shares participating in the Meeting, but not less than 2/3s vote of the owners of voting shares;
- 7.6 Decision-making procedure for holding a Meeting shall be defined by the internal documents approved by the Meeting;
- 7.7 The Meeting is not entitled to change the agenda, as well as to make decisions on issues not included in the agenda;
- 7.8 Decisions adopted by the Meeting as well as the voting results shall be brought to the information of the Company shareholders in the procedure and within the periods provided for by the Law of the Republic of Armenia on Joint Stock Companies within 45 days since the date of the adoption of such decisions;

## **8. THE PROCEDURE FOR PARTICIPATION IN THE MEETING**

- 8.1 The following persons shall have a right to participate in the Meeting: a) owners of ordinary (equity) shares of the Company with a vote equivalent to the quantity and nominal value of the shares belonging to them; b) members of the Board and executive body not being shareholders of the Company with a consultative voting right, c) the Company Supervisor, d) the Company Auditor (if its opinion is available in the materials of the Meeting).
- 8.2 A list of shareholders eligible to participate in the Meeting shall be elaborated on the basis of the Company's shareholder registry data as of the date defined by the Board.

- 8.2 Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմվում է Խորհրդի կողմից սահմանված տարվա, ամսաթվի դրությամբ՝ Ընկերության բաժնետերերի ռեեստրի տվյալների հիման վրա:
- 8.3 Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը չի կարող սահմանվել ավելի վաղ, քան Ժողով գումարելու մասին որոշման ընդունումը և ավելի ուշ, քան Ժողովի գումարումից 60 օրից ավել:
- 8.4 Ժողովի մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու համար բաժնետոմսերի անվանատերը պարտավոր է ցուցակը կազմելու տարով, ամսով, ամսաթվով տվյալներ տրամադրել այն անձանց, որոնց շահերը ներկայացնելու նպատակով նա տնօրինում է բաժնետոմսերը:
- 8.5 Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը պետք է պարունակի տվյալներ յուրաքանչյուր բաժնետիրոջ անվան (անվանման), գտնվելու (բնակության) վայրի և նրան պատկանող բաժնետոմսերի, ըստ դրանց տեսակների և դասերի մասին:
- 8.6 Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը պետք է տրամադրվի ծանոթացման նպատակով Ընկերության այն բաժնետերերին, որոնք գրանցված են Ընկերության բաժնետերերի ռեեստրում և տիրապետում են Ընկերության քվեարկող բաժնետոմսերի առնվազն 10 տոկոսին:
- 8.7 Ընկերության բաժնետիրոջ պահանջով Ընկերությունը պարտավոր է նրան տրամադրել տեղեկանք՝ Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակում նրա ընդգրկման մասին:
- 8.8 Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակում փոփոխություններ կարող են կատարվել միայն ցուցակը կազմելու ընթացքում թույլ տված սխալներն ուղղելու կամ դրանում չընդգրկված բաժնետերերի խախտված օրինական իրավունքները և շահերը վերականգնելու նպատակով:  
Սույն կանոնադրության 8.1 կետում սահմանված անձինք Ժողովի գումարման օրվանից առնվազն 15 օր առաջ ծանուցվում են Ժողովի գումարման մասին՝ նրանց համապատասխան գրավոր ծանուցում ուղարկելու, իսկ Ժողովի գումարման մասին որոշմամբ նախատեսված լինելու դեպքում՝ նաև այն հրապարակելու միջոցով:
- 8.9 Եթե Ընկերության բաժնետերերի ռեեստրում գրանցված անձն արժեթղթերի անվանատեր է, ապա Ժողովի գումարման մասին ծանուցումն ուղարկվում է նրան:  
Վերջինս պարտավոր է ծանուցումը ուղարկել այն անձնաց, որոնց շահերը նա ներկայացնում է օրենքով, այլ իրավական ակտերով կամ նրա և այդ անձանց միջև կնքված պայմանագրով սահմանված ժամկետներում:
- 8.10 Ընկերության բաժնետերը (բաժնետերերը), որը (որոնք) ձայնի իրավունք ունեցող բաժնետոմսերի առնվազն 2 տոկոսի սեփականատեր է (են) հանդիսանում, Ընկերության ֆինանսական տարվա ավարտից հետո 30 օրվա ընթացքում իրավունք ունի (ունեն) երկուսից ոչ ավել առաջարկություններ ներկայացնել տարեկան Ժողովի օրակարգի վերաբերյալ, ինչպես նաև առաջարկել Խորհրդի և վերստուգողի անդամության թեկնածուներ: Առաջարկվող թեկնածուների քանակը չի կարող գերազանցել այդ մարմիններում անդամների սահմանված քանակը:
- 8.11 Տարեկան Ժողովի օրակարգի վերաբերյալ առաջարկությունները ներկայացվում են գրավոր՝ նշելով հարցի առաջարկման հիմքերը, հարցը մտցնող բաժնետիրոջ

- 8.3 The date of elaborating the list of shareholders eligible to participate in the Meeting may not be established earlier than the date of adoption of the decision on holding the Meeting, and no later than 60 days after the date of holding the Meeting.
- 8.4 For the purpose of elaborating the list of shareholders eligible to participate in the Meeting, the nominal owner of shares shall provide date (as of the date, month, year of making the list) on persons in whose interests he/she processes the shares.
- 8.5 The list of shareholders eligible to participate in the Meeting shall also contain information on the name, address (place of location) of each shareholder, as well as the types and classes of shares owned by him.
- 8.6 The list of shareholders eligible to participate in the Meeting shall be provided to the Company shareholders (for familiarization) that are registered in the Company's Shareholder Register and possess at least 10% of the voting shares of the Company.
- 8.7 At the request of a shareholder, the Company shall provide him a notification on his/her inclusion in the list of shareholders eligible to participate in the Meeting.
- 8.8 Changes in the list of shareholders eligible to participate in the Meeting may be made only to correct mistakes made while compiling the list or to restore the violated lawful rights and interests of shareholders not included in the list.  
The persons listed in the clause 8.1 hereof shall be notified about the holding of the Meeting by relevant written notification at least 15 days before, and published notification in case of being defined by the decision on holding the Meeting.
- 8.9 If a person registered in the Company's Shareholders Register is a nominal owner of securities, the notification on holding the Meeting shall be sent to him. The latter shall be obliged to send the notification to the persons, whose interests he/she represents, within the period defined by the Law, legal acts or the contract signed between him and those persons.
- 8.10 The Company shareholder(s), who owns (own) at least 2% of voting shares shall, within 30 days after the end of the financial year, have the right to submit not more than two proposals on the agenda of the Annual Meeting, as well as to nominate candidates for the Company Board and Supervisory Commission. The number of nominated candidates may not exceed the defined number of members of those bodies.
- 8.11 Proposals on the agenda of the Annual Meeting shall be submitted in writing, specifying the grounds for raising the question, the name(s) of the shareholder(s) submitting the question, the quantity of his/her shares (by type and class) as well as the signature or its facsimile copy of the shareholder(s) making the proposal.

(բաժնետերերի) անունը (անվանումը), նրան (նրանց) պատկանող բաժնետոմսերի քանակը՝ ըստ բաժնետոմսերի տեսակների և դասերի, և առաջարկության հեղինակի (հեղինակների) ստորագրությունը կամ դրա ֆաքսիմիլային վերարտադրությունը:

8.12 Խորհրդի և վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի) անդամության թեկնածուների վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելիս, այդ թվում՝ ինքնաառաջադրման դեպքում, նշվում է թեկնածուի անունը, նրա Ընկերության բաժնետեր լինելու կամ չլինելու փաստը, նրան պատկանող Ընկերության բաժնետոմսերի քանակը՝ ըստ տեսակների և դասերի, նրան առաջադրող Ընկերության բաժնետերերի անունները (անվանումները), վերջիններիս պատկանող Ընկերության բաժնետոմսերի քանակը՝ ըստ տեսակների և դասերի:

8.13 Խորհուրդը պարտավոր է քննարկել ներկայացված առաջարկները և որոշում ընդունել դրանք տարեկան ժողովում կամ թեկնածուների ցանկում ընդգրկելու կամ ընդգրկելը մերժելու մասին՝ սույն կանոնադրության 8.10 կետով սահմանված ժամկետը լրանալուց հետո 15 օրվա ընթացքում: Խորհուրդը կարող է որոշում ընդունել ներկայացված առաջարկները տարեկան ժողովի օրակարգում կամ թեկնածուների ցանկում ընդգրկելը մերժելու մասին միայն այն դեպքում, երբ առաջարկ ներկայացրած բաժնետիրոջ (բաժնետերերի) կողմից խախտվել է սույն կանոնադրության 8.10 կետով սահմանված ժամկետը կամ առաջարկ ներկայացրած բաժնետերը (բաժնետերերը) չի (չեն) տնօրինում Ընկերության սույն կանոնադրության 8.10 կետով սահմանված քանակի քվեարկող բաժնետոմսերին կամ լրիվ չեն կամ բացակայում են սույն կանոնադրության 8.12 կետով սահմանված տվյալները կամ առաջարկը չի համապատասխանում «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և այլ իրավական ակտերի պահանջներին:

8.14 Խորհրդի հիմնավորված որոշումը՝ ներկայացված առաջարկը տարեկան ժողովում կամ թեկնածուների ցանկում ընդգրկելը մերժելու մասին, ուղարկվում է առաջարկը կամ թեկնածու ներկայացրած բաժնետիրոջը (բաժնետերերին)՝ որոշումն ընդունելու պահից 3 օրվա ընթացքում:

## **9. ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ**

9.1 Ժողովի նախապատրաստման ընթացքում Խորհուրդը, իսկ «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 74-րդ հոդվածի 6-րդ կետով նախատեսված դեպքերում՝ ժողովը գումարող անձինք, որոշում են՝

ա) ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը և վայրը.

բ) ժողովի օրակարգը.

գ) ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը.

դ) ժողովի գումարման մասին բաժնետերերին ծանուցելու կարգը.

ե) բաժնետերերին ժողովի նախապատրաստման ընթացքում տրամադրվող տեղեկությունների և նյութերի ցուցակը.

զ) քվեաթերթիկների ձևը և բովանդակությունը, եթե քվեարկությունները կատարվելու են քվեաթերթիկներով:

8.12 When submitting proposals on the nomination of the candidates for the Company Board and Supervisory Commission (Supervisor), including in the case of self-nomination, the candidate's name, the fact of his being or not being the Company shareholder, the quantity of shares (by type and class) he/she owns, the name of the Company shareholders proposing his/her candidacy, and the quantity of the Company shares belonging to them (including type and class) shall be stated.

8.13 The Board shall discuss the submitted proposals and determine whether they will or will not be incorporated in the agenda of the Annual Meeting or the list of candidates, within 15 days after the expiration of deadline defined in the clause 8.10 of this Charter. The Board may decide the refuse to include the submitted proposals in the agenda of the Annual Meeting or in the list of candidates, only if the shareholder(s) having submitted the proposal does not meet the deadline defined by the clause 8.10 hereof or the shareholder(s) having submitted the proposal does (do) not own the quantity of voting shares provided for by the clause 8.10 hereof of the date required under the clause 8.12 hereof are either incomplete or missing; or the proposal does not comply with the requirements of the Law of the Republic of Armenia on Joint Stock Companies and other legal acts.

8.14 The justified decision of the Board on refusal to include the submitted proposal in the agenda of the Annual Meeting or in the list of candidates shall be sent to the shareholder(s) having submitted the proposal or nominated the candidate within 3 days after its adoption.

## **9. PREPARATION OF THE MEETING**

9.1 During Meeting preparation, the Board, and in the cases stipulated by the clause 6 of the Article 74 of the Law of the Republic of Armenia on Joint Stock Companies, the persons assembling the meeting shall determine:

- the date, place, and time of the Meeting;
- the agenda of the Meeting;
- the date of elaborating the list of shareholders eligible to participate in the Meeting;
- the procedure of notifying the shareholders of holding the Meeting;
- the list of information and materials provided to the shareholders during the preparation of the Meeting;
- form and content of voting ballots, in case of voting by ballots.

## **10. EXTRAORDINARY MEETING**

## 10. ԱՐՏԱՀԵՐԹ ԺՈՂՈՎՐ

- 10.1 Արտահերթ ժողովը գումարվում է հորհրդի որոշմամբ՝ սեփական նախաձեռնությամբ, Ընկերության գործադիր մարմնի, վերստուգողի, Ընկերության աուդիտն իրականացնող անձի կամ պահանջը ներկայացնելու դրությամբ Ընկերության՝ առնվազն 10 տոկոս քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր բաժնետիրոջ (բաժնետերերի) պահանջով:
- 10.2 Արտահերթ ժողովի գումարման վերաբերյալ հորհրդի որոշմամբ սահմանվում է արտահերթ ժողովի գումարման ձևը՝ բաժնետերերի համատեղ ներկայությամբ կամ հեռակա կարգով քվեարկության միջոցով: Խորհուրդը չի կարող իր որոշմամբ փոխել ժողովի գումարման ձևը, եթե սույն կետում նշված արտահերթ ժողովի գումարման մասին ներկայացրած պահանջը ցուցում է բովանդակում ժողովի գումարման ձևի մասին:
- 10.3 Արտահերթ ժողովի հեռակա կարգով քվեարկությամբ գումարման մասին հորհրդի որոշմամբ պետք է սահմանվեն՝
- ա) քվեաթերթիկի ձևը
  - բ) Ընկերության բաժնետերերին՝ քվեաթերթիկները և բաժնետերերին տրամադրվող տեղեկությունները և նյութերը առաքելու տարին, ամիսը, ամսաթիվը.
  - գ) բաժնետերերի կողմից լրացված քվեաթերթիկներն Ընկերության կողմից ընդունելու վերջին ժամկետի տարին, ամիսը, ամսաթիվը:
- 10.4 Ընկերության գործադիր մարմնի, վերստուգողի, Ընկերության աուդիտն իրականացնող անձի կամ պահանջը ներկայացնելու դրությամբ Ընկերության՝ առնվազն 10 տոկոս քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր բաժնետիրոջ (բաժնետերերի) արտահերթ ժողովի գումարման մասին ներկայացրած պահանջի առկայության դեպքում հորհուրդը պետք է արտահերթ ժողովը գումարի պահանջը ներկայացնելու պահից 45 օրվա ընթացքում:
- 10.5 Ընկերության գործադիր մարմնի, վերստուգողի, Ընկերության աուդիտն իրականացնող անձի կամ պահանջը ներկայացնելու դրությամբ Ընկերության՝ առնվազն 10 տոկոս քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր բաժնետիրոջ (բաժնետերերի) արտահերթ ժողովի գումարման մասին ներկայացրած պահանջում պետք է ձևակերպված լինեն այն հարցերը, որոնք առաջարկվում են ընդգրկել ժողովի օրակարգում և դրանց քննարկման անհրաժեշտության հիմնավորումը:
- 10.6 Խորհուրդն իրավունք չունի փոփոխություններ մտցնել Ընկերության գործադիր մարմնի, վերստուգողի, Ընկերության աուդիտն իրականացնող անձի կամ պահանջը ներկայացնելու դրությամբ Ընկերության՝ առնվազն 10 տոկոս քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր բաժնետիրոջ (բաժնետերերի) կողմից առաջարկվող օրակարգում, ինչպես նաև փոփոխել օրակարգի քննարկման ենթակա հարցերի առաջարկվող ձևակերպումները, բացառությամբ այն դեպքի, երբ առաջարկվող օրակարգի հարցերը «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և սույն կանոնադրությամբ չեն սահմանվել որպես ժողովի իրավասության առարկա:

- 10.1 An Extraordinary Meeting shall be held by the decision of the Board at its own initiative, upon the request of executive body of the Company, the Supervisor, the Auditor or a shareholder(s) of at least 10% of voting shares of the Company as of the date of filing the request.
- 10.2 The form of conducting of an Extraordinary Meeting (either joint presence of shareholders or remote voting) shall be determined by the Board decision on holding an Extraordinary Meeting. The Board may not change the form of conducting an Extraordinary Meeting by its decision, if the submitted request on holding an Extraordinary Meeting stated in this point contains an indication on the form of conducting it.
- 10.3 The Board decision on holding an Extraordinary Meeting by remote vote shall specify:
- a) the form and content of voting ballots;
  - b) the date of delivery of voting ballots and information and materials to the shareholders;
  - c) the deadline for accepting the voting ballots filled in by the shareholders.
- 10.4 If there is a request by the executive body of the Company, Supervisor, Auditor or a shareholder(s) owning at least 10% of voting shares of the Company as of the date of filing the request on holding an Extraordinary Meeting, the Board shall hold an Extraordinary Meeting within 45 days after the submission of the request:
- 10.5 The request of the executive body of the Company, Supervisor, Auditor or shareholder(s) owning at least 10 % of voting shares of the Company as of the date of filing the request on holding an Extraordinary Meeting shall specify all issues proposed for inclusion in the agenda of the Meeting, as well as a justification for their inclusion.
- 10.6 The Board is not entitled to make amendment to the agenda proposed by the executive body of the Company, the Supervisor, the Auditor or a shareholder(s) owning at least 10 % of voting shares of the Company as of the date of filing the request, as well as to change the wording of issues proposed for discussion, except for the cases, when the proposed issues of the agenda are defined as the subject within the competence of the Meeting by the Law of the Republic of Armenia on Joint Stock Company and this Charter.
- 10.7 If the request on holding an Extraordinary Meeting is filed by an owner(s) of at least 10 % of voting shares of the Company, it shall contain the name of the shareholder(s) having submitted the request, the quantity of his (their) shares (including type and class). The request on holding an Extraordinary Meeting shall be signed by the person(s) submitting the request.
- 10.8 The Board decision on holding or refusing to hold an Extraordinary Meeting shall be adopted within 10 days after receiving the request of the executive body of the Company,

10.7 Եթե արտահերթ ժողով գումարելու պահանջը ներկայացվում է Ընկերության՝ առնվազն 10 տոկոս քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր բաժնետիրոջ (բաժնետերերի) կողմից, ապա այն պետք է պարունակի պահանջը ներկայացնող բաժնետիրոջ (բաժնետերերի) անունը (անվանումը), նրան (նրանց) պատկանող բաժնետոմսերի քանակը՝ ըստ բաժնետոմսերի տեսակների և դասերի: Արտահերթ ժողով գումարելու պահանջը պետք է ստորագրված լինի ժողովը գումարելու պահանջ ներկայացրած անձի (անձանց) կողմից:

10.8 Արտահերթ ժողովի գումարման կամ արտահերթ ժողովի գումարումը մերժելու մասին Խորհրդի որոշումը պետք է ընդունվի Ընկերության գործադիր մարմնի, վերստուգողի, Ընկերության աուդիտն իրականացնող անձի կամ պահանջը ներկայացնելու դրությամբ Ընկերության՝ առնվազն 10 տոկոս քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր բաժնետիրոջ (բաժնետերերի) պահանջը ներկայացնելու ամսաթվից՝ 10 օրվա ընթացքում:  
Խորհուրդն արտահերթ ժողովի գումարումը մերժելու մասին որոշում կարող է ընդունել միայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 74-րդ հոդվածով սահմանված դեպքերում:

#### **11. ԲԱԺՆԵՏԻՐՈՋ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ԺՈՂՈՎՈՒՄ**

11.1 Ընկերության բաժնետերը ժողովում մասնակցելու իր իրավունքը կարող է իրականացնել անձամբ կամ լիազորված ներկայացուցչի միջոցով:

11.2 Բաժնետերն իրավունք ունի ցանկացած ժամանակ փոխել իր լիազոր ներկայացուցչին կամ անձամբ մասնակցել ժողովին:

11.3 Ժողովում բաժնետիրոջ ներկայացուցիչը գործում է գրավոր ձևով կազմված լիազորագրի հիման վրա:

11.4 Եթե Ընկերության բաժնետոմսերը փոխանցվել են ժողովում մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարվանից, ամսից, ամսաթվից հետո, բայց մինչև ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ապա նշված ցուցակում ընդգրկված բաժնետերը պարտավոր է իրենից բաժնետոմսեր ձեռք բերած անձանց տրամադրել քվեարկելու լիազորագիր կամ ժողովում քվեարկել բաժնետոմսերի նոր սեփականատիրոջ ցուցումներին համաձայն: Նշված կարգը կիրառվում է նաև բաժնետոմսի յուրաքանչյուր հաջորդ փոխանցումների ժամանակ:

11.5 Ժողովն իրավասու է (քվորում ունի), եթե ժողովի մասնակիցների գրանցման ավարտի պահին գրանցվել են Ընկերության բաժնետերերը (նրանց ներկայացուցիչները), որոնք համատեղ տիրապետում են Ընկերության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 50-ից ավելի տոկոսին:

11.6 Եթե ժողովը տևում է մեկ օրից ավելի, ապա յուրաքանչյուր օրվա համար իրականացվում է ժողովի մասնակիցների գրանցում:

11.7 Եթե Ընկերության բաժնետերերին «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով քվեաթերթիկներ են ուղարկվել, ապա քվորումի հաշվարկման և քվեարկության արդյունքների ամփոփման համար Ընկերության կողմից հաշվի են առնվում նաև մինչև ժողովի մասնակիցների գրանցման ավարտի պահին ստացված քվեաթերթիկներով տրամադրվող ձայները:

the Supervisor, the Auditor or a shareholder (s) of at least 10 % of voting shares of the Company as of the date of filing such request.

The Board may refuse to hold an Extraordinary Meeting only in the cases stipulated by the Article 74 of the Law of the Republic of Armenia on Joint Stock Companies.

#### **11.PROCEDURE FOR PARTICIPATION OF SHAREHOLDER IN MEETINGS**

11.1 The Company shareholder may exercise his/her right to participate in the Meeting either personally or through his authorized representative.

11.2 The shareholder has the right any time change his authorized representative or to participate in the Meeting personally.

11.3 The representative shall act in the Meeting based on a written power of attorney.

11.4 In case of the transfer of a share the date of elaborating the list of shareholders eligible to participate in the Meeting, but before the date of the Meeting, the shareholder included in the mentioned list shall be obliged to issue a power of attorney for voting to the buyer of his/her shares or to vote at the Meeting in accordance with the instructions of the new owner of the shares. this principle shall also to further share transfers.

11.5 The Meeting is empowered (has a quorum) if at the end of registration of the Meeting participants, the Company shareholders (their representatives) possessing in aggregate more than 50% allocated voting shares have been registered.

11.6 If the Meeting lasts more than one day, registration of Meeting participants shall be carried out for each day separately.

11.7 If the Company shareholders have received voting ballots in accordance with the procedures defined by the Law of the Republic of Armenia on Joint Stock Companies, the Company shall also take into account the votes delivered by voting ballots as of the time of completing registration of the Meeting participants for purposes of counting the quorum and the summarizing the voting results.

- 11.8 Քվորումի բացակայության դեպքում հայտարարվում է նոր ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը: Նոր ժողովի գումարման դեպքում օրակարգի փոփոխություն չի թույլատրվում:
- 11.9 Չկայացած ժողովի փոխարեն գումարվող նոր ժողովն իրավասու է, եթե մասնակիցների գրանցման ավարտի պահին գրանցվել են Ընկերության բաժնետերերը (նրանց ներկայացուցիչները), որոնք համատեղ տիրապետում են Ընկերության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 30-ից ավելի տոկոսին:
- 11.10 Ընկերության բաժնետերերի ծանուցումը նոր ժողովի գումարման մասին կատարվում է «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 71-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված կարգով, իսկ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված դեպքերում ժողովի գումարման օրվանից առնվազն 10 օր առաջ:
- 11.11 Եթե քվորումի բացակայության պատճառով չկայացած ժողովի գումարման ամսաթիվը տեղափոխվում է 20 օրից պակաս ժամկետով, ապա այդ ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի նոր ցուցակ չի կազմվում:
- 11.12 Քվեարկությունը ժողովում իրականացվում է «Ընկերության մեկ քվեարկող բաժնետոմս՝ մեկ ձայն» սկզբունքով, բացառությամբ «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքով նախատեսված դեպքերի:

- 11.8 In the lack of a quorum, the date of a new meeting shall be announced. In case of holding a new meeting, the agenda shall not be changed.
- 11.9 A new meeting instead of the meeting that failed to take place shall be empowered, if at the end of the registration of participants, the Company shareholders (their representatives) possessing in aggregate more than 30% of the Company outstanding voting shares have been registered.
- 11.10 The Company shareholders shall be notified of the new meeting in accordance with procedure provided for by the clause 1 of the Article 71 of the Law of the Republic of Armenia on Joint Stock Companies and in cases stipulated by the clause 2 of the Article 71 of the Law of the Republic of Armenia on Joint Stock Companies- at least 10 days before the date of holding the Meeting.
- 11.11 If as a result of a quorum, the Meeting is postponed for the period less than 20 days, a new list of shareholders eligible to participate in a new meeting shall not be elaborated.
- 11.12 Voting at the Meeting shall be based on the principle of "one voting share-one vote", except for the cases stipulated by the Law on Joint Stock Companies.

## 12. Ընկերության Խորհուրդը

- 12.1 Խորհուրդն իրականացնում է Ընկերության գործունեության ընդհանուր ղեկավարումը, բացառությամբ այն հարցերի, որոնք "Բաժնետիրական ընկերությունների մասին" Հայաստանի Հանրապետության օրենքով և սույն կանոնադրությամբ վերապահված են ժողովի բացառիկ իրավասությանը:
- 12.2 Խորհրդի բացառիկ իրավասությանն են պատկանում՝
- Ընկերության գործունեության հիմնական ուղղությունների որոշումը.
  - տարեկան և արտահերթ ժողովների գումարումը, բացառությամբ «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 74-րդ հոդվածի 6-րդ կետով նախատեսված դեպքերի.
  - Ժողովների օրակարգերի հաստատումը.
  - Ժողովներին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարվա, ամսվա, ամսաթվի հաստատումը, ինչպես նաև բոլոր այն հարցերի լուծումը, որոնք կապված են ժողովների նախապատրաստման ու գումարման հետ և վերապահված են Խորհրդի իրավասությանը՝ «Բաժնետիրական

## 12. The Board of the Company

- 12.1 The Board carries out general management of the Company, except for the issues pertaining to the exclusive authority of the Meeting under the Law of the Republic of Armenia on Joint Stock Companies and this Charter.
- 12.2 The exclusive authority of the Board shall be:
- determination of main orientations of the Company activities;
  - holding of annual and extraordinary meetings, except for the cases defined by the clause 6 of the Article 74 of the Law of the Republic of Armenia on Joint Stock Companies;
  - approval of the Meeting agenda;
  - approval of the date of elaborating a list of shareholders eligible to participate in the Meeting, as well as settlement of all the issues related to the preparation and conducting of the Meeting and which, according to the provisions of the Law of the Republic of Armenia on Joint Stock Companies, are within the authority of the Board;
  - allocation of bonds and other securities;
  - determination of market value of property in accordance with the procedure stipulated by the Article 59 of the Law of the Republic of Armenia on Joint Stock Companies;
  - acquisition of shares, bonds and other securities allocated by the Company in cases defined by the Law of the Republic of Armenia on Joint Stock Companies;;

ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համապատասխան.

ե) պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխումը.

զ) գույքի շուկայական արժեքի որոշումը՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով.

է) «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերում Ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերի, պարտատոմսերի և այլ արժեթղթերի ձեռքբերումը.

ը) Ընկերության կանոնադրության հաստատումը, դրանում փոփոխությունների և լրացումների կատարումը, կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ, եթե դրանց իրականացումը բացառապես պայմանավորված է Հայաստանի Հանրապետության տարածքում Ընկերության գտնվելու վայրի փոփոխությամբ կամ, Ընկերության հայտարարված բաժնետոմսերի տեղաբաշխմամբ պայմանավորված, կանոնադրության փոփոխություններ կատարելով, ինչպես նաև «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածի 2.1-ին մասով նախատեսված դրույթներ սահմանելով.

թ) Ընկերության աուդիտն իրականացնող անձի վճարման չափի սահմանումը.

թա) Ընկերության բաժնետոմսերի դիմաց վճարվող տարեկան շահութաբաժինների չափի և վճարման կարգի վերաբերյալ ժողովին առաջարկությունների նախապատրաստումը.

թբ) Ընկերության բաժնետոմսերով միջանկյալ (եռամսյակային կամ կիսամյակային) շահութաբաժինների չափի և վճարման կարգի սահմանումը.

թգ) Ընկերության պահուստային և այլ հիմնադրամների օգտագործումը.

թդ) Ընկերության կառավարման մարմինների գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի հաստատումը.

թե) Ընկերության մասնաճյուղերի և ներկայացուցչությունների, հիմնարկների ստեղծումը.

թզ) այլ կազմակերպություններին մասնակցելը, եթե այդ մասնակցությունն իրենից խոշոր գործարք չի ներկայացնում.

թէ) Ընկերության գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքների կնքումը՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի VIII գլխում նախատեսված դեպքերում.

թը) «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի IX գլխով նախատեսված գործարքների կնքումը.

թթ) ամենամյա ծախսերի նախահաշվի և դրա կատարողականի հաստատումը.

ժ) Ընկերության հաստիքացուցակի հաստատումը.

իա) «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

ի) Ընկերության գործադիր մարմնի (միանձնյա կամ կոլեգիալ) ձևավորումը, լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, ինչպես նաև Ընկերության գործադիր մարմնի լիազորությունները ժամանակավորապես իրականացնող պաշտոնատար անձի նշանակումը.

- h) Approval of the Company's Charter, making amendments and additions to it, approving the Charter in a new edition, if such changes are exclusively due to the change of the Company's location within the territory of the Republic of Armenia or due to the distribution of the Company's declared shares, as well as defining provisions provided for in Article 88(2.1) of the Law of the Republic of Armenia "On Joint Stock Companies":
- i) determination of the amount of payment to the Auditor;
- j) making proposals to the Meeting on the amount and payment procedure of annual dividends
- k) determination of the amount and payment procedure of interim (quarterly and semi-annual) dividends;
- l) utilization of reserve and other funds of the Company;
- m) approval of internal documents regulating the activities of management bodies of the Company;
- n) establishment of branches and representations, units of the Company;
- o) participation in other organizations unless the participation represents a major transaction;
- p) conclude a major transaction on acquisition and alienation of the Company property in cases stipulated in the Chapter VIII of the Law of the Republic of Armenia on Joint Stock Companies;
- q) conclusion of transactions stipulated by the Chapter IX of the Law of the Republic of Armenia on Joint Stock Companies;
- r) approval of the annual expenditure plan and its implementation;
- s) approval of the staff list of the Company;
- t) regulation of other issues stipulated by the Law of the Republic of Armenia on the Stock Companies and this Charter.
- u) Increase of the charter capital amount through increasing the nominal value of shares or through the allocation of additional shares;
- v) Formation of the Company's executive body (sole or collegial), early termination of its powers, as well as appointment of a person temporarily exercising the powers of the Company's executive body;
- w) Election off the Company's Controller (Supervisor) and early termination of their (his/her) powers,
- x) Approval of the person conducting the Company's audit;
- y) Determination of the form of communication of information and materials by the Company to shareholders, including selection of the appropriate mass media channel, if the communication is also to be carried out in the form of a public announcement;
- z) Acquisition and buyback of shares by the Company in accordance with the Law of the Republic of Armenia "On Joint Stock Companies";
- aa) Determination of remuneration terms for the Company's senior officers (Director, General Director, or members of the Board/Management, except for the Chairperson or members of the Board of Directors);

- յ) Ընկերության վերստուգող հանձնաժողովի անդամների (վերստուգողի) ընտրությունը և նրանց (նրա) լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,
- իւ) Ընկերության աուդիտն իրականացնող անձի հաստատումը.
- ծ) Ընկերության կողմից բաժնետերերին տեղեկությունների և նյութերի հաղորդման ձևի որոշումը, ներառյալ զանգվածային լրատվության համապատասխան միջոցի ընտրությունը, եթե հաղորդումը պետք է իրականացվի նաև հրապարակային հայտարարության ձևով.
- կ) Ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերումը եւ հետզնումը՝ <<Բաժնետիրական ընկերությունների մասին>> ՀՀ օրենքով նախատեսված դեպքերում:
- հ) Ընկերության ղեկավար պաշտոնատար անձանց (տնօրենի, գլխավոր տնօրենի կամ վարչության, տնօրինության անդամի, բացառությամբ խորհրդի նախագահի կամ խորհրդի անդամի) աշխատանքի վարձատրության պայմանների որոշումը.
- ձ) դուստր կամ կախյալ ընկերությունների ստեղծումը կամ դրանց մասնակցությունը.
- 12.3 Խորհրդի բացառիկ իրավասության ենթակա հարցերը չեն կարող փոխանցվել Ընկերության գործադիր մարմնի լուծմանը:
- 12.4 Խորհրդի անդամներն ընտրվում են տարեկան ժողովի կամ անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցնելու դեպքում արտահերթ ժողովի կողմից «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով: Խորհրդի անդամների լիազորությունները դադարում են Խորհրդի հաջորդ կազմի ընտրվելուց հետո:
- 12.5 Ժողովը կարող է որոշում ընդունել Խորհրդի ցանկացած անդամի (բոլոր անդամների) լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին:
- 12.6 Ընկերության այն բաժնետերերը, որոնք ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու օրվա դրությամբ տիրապետում են Ընկերության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոսին, իրավունք ունեն առանց ընտրության ընդգրկվել Խորհրդի կազմում կամ դրանում նշանակել իրենց ներկայացուցչին: Այդ իրավունքը վերապահվում են նաև անվանատերերին:
- 12.7 Խորհրդի կազմում ընտրված են համարվում ծայների առավելագույն քանակ ստացած թեկնածուները:
- 12.8 Խորհրդի նիստերը գումարում է Խորհրդի նախագահը իր նախաձեռնությամբ՝ Խորհրդի անդամի, Ընկերության վերստուգողի, Ընկերության աուդիտն իրականացնող անձի, Ընկերության գործադիր մարմնի պահանջով: Խորհրդի նիստերի գումարման և անցկացման կարգը սահմանվում է ժողովի հաստատած՝ Խորհրդի կանոնակարգով: Խորհուրդը կարող է հեռակա քվեարկությամբ (հարցման միջոցով) ընդունել որոշումներ:
- 12.9 Խորհրդի նիստում քվորումն ապահովված է համարվում Խորհրդի կազմում մտնող անձանց 2/3 ներկայության դեպքում:
- 12.10 Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա Խորհրդի անդամների ծայների 2/3-ով: Քվեարկության ժամանակ Խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի միայն մեկ ծայն: Զայն և քվեարկության իրավունքի փոխանցումը Խորհրդի մեկ անդամից մյուսին (այդ թվում՝ ցանկացած երրորդ անձի) չի թույլատրվում:

bb) Creation of subsidiaries or dependent companies or participation therein.

- 12.3 Issues relegated to the exclusive competence of the Board may not be transferred to and settled by the executive body of the Company.
- 12.4 Members of the Board shall be elected by the Annual Meeting or in case of early termination of the authorities of the members-by the Extraordinary Meeting under the Law of the Republic of Armenia on Joint Stock Companies and this Charter. The authorities of the Board members shall be terminated when the next Board is elected.
- 12.5 The Meeting may decide on early termination of authorities of any member (all members) of the Board.
- 12.6 The shareholder as well as nominal holders of the Company who own 10% or more the Company outstanding voting shares as of the date of elaborating the list of shareholders eligible to participate in the Meeting may either become Board members without election or appoint their representative in the Company Board.
- 12.7 The candidates having received the maximum number of votes shall be deemed elected Board members.
- 12.8 Board sessions shall be held by the Chairman of the Board at his own initiative, at the request of a Board member, the Company Supervisor, the Company Auditor, the executive body of the Company. The procedure of organizing and conducting Board sessions shall be defined by the Board regulation approved by the Meeting. The Board may adopt decisions by remote voting (inquiry).
- 12.9 The sessions of the Board require a quorum of 2/3 members of the Board to be present.
- 12.10 Decisions of the Board shall be adopted by a 2/3 vote of the Board members present at the session. Each member of the Board shall have only one vote. A company Board member may not transfer his/her vote and voting right to another Board member (including any third person).

12.11 Խորհրդի նախագահն ունի որոշիչ ձայնի խրավունք:

12.11 The Chairperson of the Board has a decisive voting right.

### **13. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆԸ**

#### **13.1 Ընկերության Գործադիր Մարմինը**

- 13.1.1 Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է ընկերության գործադիր մարմինը՝ Ընկերության Վարչությունը և Ընկերության Գործադիր տնօրենը: Գործադիր տնօրեն, նրա տեղակալ, Վարչության անդամ չի կարող լինել այն անձը, որը չի համապատասխանում ՀՀ օրենսդրությամբ և Ընկերության ներքին իրավական ակտերով սահմանված որակավորման համապատասխանության չափանիշներին և (կամ) որին օրենքով արգելված է լինել Ընկերության ղեկավար: Վարչության կազմում պարտադիր ընդգրկվում են Գործադիր տնօրենը և նրա տեղակալները և գլխավոր հաշվապահը: Ընկերության վարչության քանակական կազմը հաստատվում է Ընկերության Խորհրդի կողմից, իսկ նշանակումը կատարում է Ընդհանուր ժողովի կողմից:
- 13.1.2 Ընկերության գործադիր մարմնի իրավասությանն են պատկանում Ընկերության ընթացիկ գործունեության կառավարման բոլոր հարցերը՝ բացառությամբ "Բաժնետիրական ընկերությունների մասին" Հայաստանի Հանրապետության օրենքով և սույն կանոնադրությամբ ժողովի և Խորհրդի բացառիկ իրավասություն հանդիսացող հարցերի:
- 13.1.3 Ընկերության գործադիր մարմինը կազմակերպում է ժողովի և Խորհրդի որոշումների կատարումը:
- 13.1.4 Ընկերության գործադիր մարմինների ձևավորումը և դրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը կատարվում է Խորհրդի որոշմամբ:

#### **13.2 Ընկերության Վարչությունը**

- 13.2.1 Ընկերության Վարչությունը իրականացնում է հետևյալ գործառնությունները՝
- ա) սահմանում է Ընկերության կողմից տրամադրվող վարկային պրոդուկտների տոկոսադրույքները և մատուցվող ծառայությունների սակագները,
  - բ) հաստատում է Ընկերության աշխատատեղերը, աշխատանքի խթանման և խրախուսման պայմանները,
  - գ) քննարկում և որոշումներ է ընդունում վերստեղծման, ստուգումների, կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների ղեկավարների հաշվետվությունների վերաբերյալ,
  - դ) քննարկում և որոշումներ է ընդունում Ընկերության գույքի օտարման գործարքների վերաբերյալ՝ իր իրավասությունների շրջանակում,
  - ե) քննարկում և որոշումներ է ընդունում մասնաճյուղեր և ներկայացուցչություններ ստեղծելու, դրանց գործունեությունը դադարեցնելու նպատակահարմարության մասին,

### **13. THE EXECUTIVE BODY OF THE COMPANY**

#### **13.1 Executive Body of the Company**

- 13.1.1 The management of current activities of the company shall be implemented by the executive body of the Company – the Executive Committee (henceforth, the "Committee") and the Executive Director of the Company. Persons, who do not meet qualification compliance criteria established by the Central Bank of Armenia and/or who are prohibited by the law to become a manager of company shall not hold the positions of the director, the deputy director and the Committee member of the Company. The composition of the Committee shall necessarily include the Director, the Deputy Directors and the Chief Accountant. Composition of the Executive Committee is approved by the Board of the Company.
- 13.1.2 The Executive Body shall be responsible for the Company management issues, except for cases that, under the Law of the Republic of Armenia on Joint Stock Companies and this Charter, may be resolved exclusively by the Meeting and the Board.
- 13.1.3 The Company executive body shall organize the implementation of the decisions adopted by the Meeting and the Board.
- 13.1.4 The establishment of the Company executive bodies and early termination of their authorities shall be carried out by the decision of the Board.

#### **13.2 The Executive Committee of the Company**

- 13.2.1 The Executive Committee performs following functions:
- a) Define interest rates of loan products and tariffs of services offered by the Company;
  - b) Approve the staff positions of the Company and conditions for staff promotion and encouragement;
  - c) Discuss and make decisions on follow-up inspections and reports of managers of structural and territorial subdivision of the Company;
  - d) Discuss and make decisions on alienation of the Company's property, within the scope of its authorities;
  - e) Discuss and make decisions on expedience of creation of branches and representations, termination of their activities;
  - f) Submit for the approval of the Board internal procedures and regulations of the Company, regulations of separated subdivisions, administrative organizational structure of the Company, the staff list, as well as other internal legal acts subject to the approval of the Board;
  - g) Fulfill other duties vested in it by internal legal acts of the Company.

զ) Խորհրդի հաստատման է ներկայացնում Ընկերության ներքին կարգերն ու կանոնակարգերը, առանձնացված ստորաբաժանումների կանոնակարգերը, Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքը, հաստիքացուցակը, ինչպես նաև Խորհրդի հաստատման ենթակա այլ ներքին իրավական ակտեր,

ե) Իրականացնում է ներքին իրավական ակտերով իր վրա դրված այլ պարտականություններ:

13.2.2 Ընկերության Վարչության նիստն իրավասու է (քվորում ունի), եթե նիստին անձնական մասնակցության կամ հեռակա քվեարկության ձևով (հարցման միջոցով) մասնակցում են Վարչության անդամների կեսից ավելին: Ընկերության Վարչության որոշումներն ընդունվում են նիստին ներկա Վարչության անդամների ձայների մեծամասնությամբ: Վարչության յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայն: Քվեարկության ժամանակ Վարչության յուրաքանչյուր անդամ ունի ձայնի իրավունք: Ձայնի և քվեարկության իրավունքի փոխանցումն այլ անձի (այդ թվում՝ Վարչության այլ անդամի) չի թույլատրվում:

13.2.3 Գործադիր տնօրենն ունի որոշիչ ձայնի իրավունք:

13.2.4 Դեմ կամ ձեռնպահ քվեարկած անդամը պարտավոր է հիմնավորել իր կարծիքը:

13.2.5 Ընկերության Վարչության նիստերը գումարում է Գործադիր տնօրենը՝ առնվազն ամիսը մեկ անգամ, ինչպես նաև՝ ըստ անհրաժեշտության:

13.2.6 Վարչության նիստերն արձանագրվում են: Նիստի արձանագրությունը կազմվում է նիստի ավարտից հետո՝ 10-օրյա ժամկետում:

13.2.7 Վարչության նիստերը կազմակերպում և վարում է Գործադիր տնօրենը, որը ստորագրում է նիստերի որոշումները:

### 13.3 Գործադիր տնօրենը

13.3.1 Ընկերության Գործադիր տնօրենը իրականացնում է հետևյալ գործառնությունները՝

ա) տնօրինում է Ընկերության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Ընկերության անունից,

բ) ներկայացնում է Ընկերության Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում,

գ) գործում է առանց լիազորագրի,

դ) տալիս է լիազորագրեր,

ե) սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային,

զ) բանկերում բացում է Ընկերության հաշվարկային (այդ թվում՝ արտարժույթային) և այլ հաշիվներ,

է) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,

ը) սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Ընկերության աշխատակիցներին,

թ) աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ,

13.2.2 The session of the Committee of the Company shall be competent (has a quorum), if over half of the Committee members participate in the session in person or by remote voting. Decisions of the Company Committee shall be adopted by a majority votes of members present in the session; each member shall have one vote. During the voting, each Committee member has the right to voting. Transfer of the vote and the voting right to other persons (including other member of the Committee) is prohibited.

13.2.3 The Executive Director shall have a casting vote.

13.2.4 Committee members who vote against or abstain from voting on any agenda item shall substantiate their opinion.

13.2.5 Sessions of the Company Committee shall be convened at least once in a month, as well as when necessary.

13.2.6 Minutes of the Committee sessions shall be taken. The minutes of a session shall be produced in 10 days after the date of completion of the session.

13.2.7 Committee session shall be organized and held by the Executive Director, who signs decisions made at the session.

### 13.3 The Executive Director

13.3.1 The Executive Director performs following functions:

- a) Manage the Company's property, including assets, execute transactions on behalf of the Company;
- b) Represent the Company in the Republic of Armenia and abroad;
- c) Act without a power of attorney;
- d) issue powers of attorney;
- e) Sign contracts, including employment contracts, in the established manner;
- f) Open the Company's settlement and other account (including in foreign) with banks;
- g) Within his/her authorities issue orders, decrees, binding instructions, and supervise their implementation;
- h) In a stipulated manner hire and dismisses from work employees of the Company;
- i) Apply rewarding and disciplinary measures towards employees of the Company.
- j) Fulfill functions of the Chairman of the Committee, in particular:
  - 1) Organize works of the Committee;
  - 2) Convene and preside over sessions of the Committee;
  - 3) Organize taking of minutes of the Committee sessions;

ժ) իրականացնում է Վարչության նախագահի գործառնությունները, մասնավորապես՝

- 1) կազմակերպում է Վարչության աշխատանքները,
- 2) գումարում և նախագահում է Վարչության նիստերը,
- 3) կազմակերպում է Վարչության նիստերի արձանագրությունների վարումը,
- 4) ներկայացնում է Վարչությունը հորհրդի նիստերին,
- 5) ստորագրում է Վարչության նիստերի որոշումները:

13.3.2 Գործադիր տնօրենի իրավասությանն են պատկանում Ընկերության ընթացիկ գործունեության կառավարման բոլոր հարցերը՝ բացառությամբ օրենքով և Կանոնադրությամբ Ընդհանուր ժողովի, հորհրդի և Վարչության բացառիկ իրավասություն հանդիսացող հարցերի:

13.3.3 Գործադիր տնօրենը կազմակերպում է ժողովի, Վարչության և հորհրդի որոշումների կատարումը:

#### **13.4 Ընկերության գործադիր տնօրենի տեղակալները և գլխավոր հաշվապահը**

13.4.1 Ընկերության Գործադիր տնօրենը կարող է ունենալ տեղակալներ:

13.4.2 Գործադիր տնօրենի տեղակալները նշանակվում են խորհրդի կողմից՝ Ընկերության Գործադիր տնօրենի ներկայացմամբ:

13.4.3 Ընկերության Գործադիր տնօրենի տեղակալները պատասխանատվություն են կրում գործունեության կոնկրետ ոլորտներում իրենց վերապահված պարտականությունների կատարման համար, ինչպես նաև իրականացնում է (են) Ընկերության տարածքային ստորաբաժանումների աշխատանքների կոորդինացումը:

13.4.4 Ընկերության գլխավոր հաշվապահն իրականացնում է «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով գլխավոր հաշվապահի համար սահմանված իրավունքները և պարտականությունները:

13.4.5 Ընկերության գլխավոր հաշվապահը իր գործառնությունները իրականացնում է համաձայն ՀՀ «Հաշվապահական հաշվառման մասին» օրենքի, սույն կանոնադրության, Ընկերության «Հաշվապահական Հաշվառման» քաղաքականությամբ:

13.4.6 Ընկերության գլխավոր հաշվապահի իրավունքները պարտականությունները չեն կարող փոխանցվել Ընդհանուր ժողովին, հորհրդին, Գործադիր տնօրենին կամ այլ անձի:

13.4.7 Ընկերության գլխավոր հաշվապահը նշանակվում է հորհրդի կողմից՝ Ընկերության Գործադիր տնօրենի ներկայացմամբ:

13.4.8 Ընկերության գլխավոր հաշվապահը պատասխանատվություն է կրում Ընկերության հաշվապահական հաշվառման վարման, ֆինանսական և վիճակագրական հաշվետվություններն օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված պետական մարմիններին ժամանակին ներկայացնելու, դրանցում արժանահավատ տեղեկատվություն արտադրելու, ինչպես նաև Ընկերության ժողովին, հորհրդին, պարտատերերին և զանգվածային լրատվության միջոցներում Ընկերության

4) Represent the Committee at the meeting of the Board;

5) Sign decisions of the Committee;

13.3.2 ALL matters related to management of current activities of the Company are reserved to the authorities of the Executive Director, except for matters reserved to the exclusive authorities of the General Meeting, the Board and the Committee pursuant to the law and this Charter.

13.3.3 The Executive Director shall organize implementation of decisions of the General Meeting, the Committee and Board.

#### **13.4 The Deputy Directors and Chief Accountant of the Company**

13.4.1 The Executive Director of the Company may have deputies.

13.4.2 Deputies of the Executive Director shall be appointed by the Board , upon presentation of the Executive Director of the Company.

13.4.3 Deputies of the Executive Director shall be responsible for fulfillment of duties reserved to them in concrete of the Company activities, as well as for coordination of works of the Company's territorial subdivisions.

13.4.4 The Chief Accountant of the Company shall fulfill rights and responsibilities defined for a chief accountant by the Law of the Republic of Armenia "On Accounting".

13.4.5 The Chief Accounting of the Company carries out his/her functions in accordance with the Law of the Republic of Armenia "On Accounting", this Charter, the Accounting Policy of the Company.

13.4.6 Right and responsibilities of the Chief Accounting of the Company shall not be transferred to the General Meeting, the Board, the Executive Director or any other person.

13.4.7 The Chief Accountant of the Company shall be appointed by the Board , by the presentation of the Executive Director.

13.4.8 The Chief Accountant of the Company shall bear responsibility for maintaining the accounting of the Company, timely submission of financial and statistical reports to the public administration bodies stipulated by laws and other legal acts, reflection of trustworthy information therein, as well as provision of unbiased financial information about the Company to the General Meeting, the Board, the creditors and in the mass media.

մասին անկողմնակալ ֆինանսական տեղեկատվություններ արտացոլելու համար:

13.4.9 Գլխավոր հաշվապահի պահանջների կատարումը՝ կապված հաշվապահական հաշվառման համար անհրաժեշտ տվյալների և փաստաթղթերի ներկայացման հետ, պարտադիր է Ընկերության բոլոր աշխատողների համար:

13.4.10 Առանձին տնտեսական գործառնությունների իրականացման հետ կապված՝ Ընկերության Գործադիր տնօրենի և գլխավոր հաշվապահի միջև տարաձայնությունների դեպքում գլխավոր հաշվապահը կատարման է ընդունում փաստաթղթերը՝ Գործադիր տնօրենի կարգադրությամբ (հանձնարարությամբ), և նման գործառնությունների իրականացման հետևանքների պատասխանատվությունը կրում է Գործադիր տնօրենը:

13.4.11 Ընկերության գլխավոր հաշվապահը պետք է ունենա այդ պաշտոնում աշխատելու համար ՀՀ օրենսդրությամբ և ընկերության ներքին իրավական ակտերով սահմանված համապատասխան որակավորում:

#### **14. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՊԱՀՈՒՍԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԸ**

14.1 Ընկերությունում ստեղծվում է պահուստային հիմնադրամ՝ կանոնադրական կապիտալի 15 տոկոսի չափով:

14.2 Պահուստային հիմնադրամն օգտագործվում է Ընկերության կորուստները ծածկելու, ինչպես նաև Ընկերության պարտատոմսերը մարելու և բաժնետոմսերը հետ գնելու համար, եթե Ընկերության շահույթը և այլ միջոցները դրա համար չեն բավարարում:

14.3 Պահուստային հիմնադրամը չի կարող օգտագործվել այլ նպատակների համար:

#### **15. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՍՏՈՒԳՈՐԸ**

15.1 Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության վերահսկումն իրականացնելու համար խորհուրդն ընտրում է Ընկերության վերստուգողին:

15.2 Վերստուգողի իրավասությունները և ստուգումների անցկացման կարգը սահմանվում են «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և սույն կանոնադրությամբ:

15.3 Վերստուգողը հետևում է Ընկերության կառավարման մարմինների որոշումների կատարմանը, ստուգում է Ընկերության փաստաթղթերի համապատասխանությունն օրենքներին և այլ իրավական ակտերին ու կանոնադրությանը:

15.4 Վերստուգողը իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, սույն կանոնադրությամբ, ինչպես նաև Խորհրդի կողմից հաստատված ներքին փաստաթղթերով՝ վերստուգողի աշխատանքի կանոնակարգով:

15.5 Վերստուգողը իրականացնում է Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության տարեկան արդյունքների ստուգումը, ստուգում է Ընկերության ֆինանսատնտեսական գործունեությունը սեփական նախաձեռնությամբ՝ ցանկացած ժամանակ, ժողովի կամ Խորհրդի որոշմամբ, ինչպես նաև

13.4.9 Fulfillment of assignment of the Chief Accountant regarding submission of data and documents required for accounting shall be mandatory for all employees of the Company.

13.4.10 In case of disagreements between the Executive Director and the Chief Accountant of the Company regarding execution of individual economic transactions, the Chief Accountant shall accept the documents for performance by the instruction (assignment) of the Executive Director, and the Executive Director shall bear responsibility for consequences of execution of such transactions.

13.4.11 The Chief Accountant of the Company shall hold a Professional Qualification Certificate entitling to work in that position granted by the Central Bank of Armenia.

#### **14. THE RESERVE FUND THE COMPANY**

14.1 The Company shall create a reserve fund in the amount of 15% of the statutory capital.

14.2 The reserve funds shall be utilized to cover losses of the Company, as well as to repay the bonds and back Company shares, if the profits and other funds of the Company are insufficient for such purposes.

14.3 The reserve, fund may not be utilized for other purposes.

#### **15. THE SUPERVISOR OF THE COMPANY**

15.1 The Board shall elect a Company Supervisor to control the financial activities of the Company.

15.2 The authorities of the Supervisor as well as the procedure of controls shall be defined by the Law of the Republic of Armenia on Joint Stock Companies and this Charter.

15.3 The Supervisor shall monitor the implementation of decisions of the Company management bodies; check the compliance of the Company documents with laws and other legal acts and the Charter.

15.4 In its activities, the Supervisor shall be guided by the Legislation of the Republic of Armenia, this Charter, as well as by internal document approved by the Meeting, by-law of the Supervisor.

15.5 The Supervisor shall inspect the results of the annual financial and economic activity of the Company, inspect the financial and economic activities of the Company at any time at its own initiative, or based upon a decision of the Meeting or the Board, as well as at the request of the owner (s) of at least 10% of the voting shares of the Company.

Ընկերության՝ քվեարկող բաժնետոմսերի առնվազն 10 տոկոս սեփականատեր բաժնետիրոջ (բաժնետերերի) պահանջով:

- 15.6 Վերստուգողը իրավունք ունի պահանջել արտահերթ ժողովի գումարում՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 74-րդ հոդվածին համապատասխան:
- 15.7 Վերստուգողի պահանջով նրան պետք է ներկայացվեն Ընկերության, դրա մասնաճյուղերի, ներկայացուցչությունների և հիմնարկների ֆինանսատնտեսական գործունեությանը վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը, նյութերը և բացատրությունները:
- 15.8 Վերստուգողին ընտրում է Խորհուրդը՝ 3 տարի ժամկետով:
- 15.9 Վերստուգողը հաշվետու է Խորհրդին: Վերստուգողը պետք է Ընկերության Խորհրդին եռամսյակային հաշվետվություն ներկայացնի:
- 15.10 Վերստուգողի վարձատրության և կամ (կամ) ծախսերի փոխհատուցման չափերը և պայմանները սահմանվում են Խորհրդի որոշմամբ:

## **16. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՌԻԴՏՆ ԻՐԱՎԱՆԱՑՆՈՂ ԱՆՁ**

- 16.1 Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգման նպատակով Ընկերությունը ներգրավում է աուդիտ իրականացնող կազմակերպություն, որը գույքային շահերով կապված չէ Ընկերության կամ նրա բաժնետերերի հետ՝ կնքելով նրա հետ համապատասխան պայմանագիր:
- 16.2 Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգումն աուդիտորի կողմից կարող է իրականացնել նաև Ընկերության՝ քվեարկող բաժնետերերի առնվազն 5 տոկոս սեփականատեր բաժնետերերի պահանջով: Այդ դեպքում աուդիտորի ծառայությունները վճարում են ստուգում պահանջող բաժնետերերը:
- 16.3 Ընկերության աուդիտն իրականացնող անձին հաստատում է Խորհուրդը: Ընկերության աուդիտն իրականացնող անձի հետ պայմանագիրը կնքում է Խորհրդի նախագահը: Խորհուրդը որոշում է աուդիտն իրականացնող անձի ծառայությունների համար վճարող գումարի չափը:

## **17. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՍՏՈՒԳՈՂԸ ԵՎ ԱՌԻԴՏ ԻՐԱՎԱՆԱՑՆՈՂ ԱՆՁԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ**

- 17.1 Վերստուգողը կամ Ընկերության աուդիտն իրականացնող անձը Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգումների արդյունքների հիման վրա պատրաստում է եզրակացություններ, որոնք պետք է պարունակեն՝
- ա) Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության վերլուծությունը,
  - բ) Ընկերության հիմնադրամների կազմավորման և դրանց նպատակային օգտագործման վերլուծությունը,
  - գ) Ընկերության հաշվետվություններում և այլ ֆինանսական փաստաթղթերում բովանդակող տեղեկությունների հավաստիության հաստատումը,
  - դ) Ընկերության կառավարման մարմինների որոշումների, հաշվապահական հաշվառման վարման, ֆինանսական և այլ հաշվետվության համապատասխանության հաստատումը գործող օրենքներին և այլ իրավական ակտերին,
  - ե) ստուգման առանձնահատկությունների հետ կապված տեղեկատվություններ:

- 15.6 The Supervisor is entitled to request to hold an Extraordinary Meeting in accordance with the article 74 of the Law of the Republic of Armenia on the Joint Stock Companies.
- 15.7 Upon the request, the Supervisor shall be provided with all the necessary documents, materials and explanations relating to the financial and economic activities of the Company, its branches, representations and units.
- 15.8 The Supervisor shall be elected by the Board for three-year term.
- 15.9 The Supervisor shall report to the Board . The Supervisor shall report to the Board on quarterly basis.
- 15.10 The amount and terms of payment and (or) remuneration of the Supervisor shall be determined by a decision of the Board .

## **16. THE AUDITOR OF COMPANY**

- 16.1 To carry out an inspection of the financial and economic activities of the Company, the Company shall involve an auditing organization not having any property interests with the Company or its shareholders by concluding a relevant contract.
- 16.2 The Auditor may also audit the financial and economic activities of the Company at the request of shareholder owning at least 5 % of Company's voting shares. In this case, the requesting shareholders shall pay for the Auditor's services.
- 16.3 The Company Auditor shall be approved by the Board . The contract with the Auditor shall be signed by the Chairman of the Board. The Board shall determine the amount of payment to the Auditor.

## **17. THE CONCLUSION OF THE SUPERVISOR AND THE AUDITOR**

- 17.1 On the basis of the inspection results of the Company's financial and economic activity, the Supervisor or the Auditor shall prepare conclusions which shall contain:
- a) an analysis of the financial and economic performance of the Company;
  - b) an analysis of the establishment of the Company funds and their targeted utilization;
  - c) confirmation of the reliability of the information included in the statement and other financial documents of the Company;
  - d) confirmation of the compliance of the decisions of the Company management bodies, accounting, financial and other reports with existing laws and other legal acts;
  - e) other information relating to the auditing specifics.
- 17.2 The Supervisor shall submit conclusion on the inspection of the annual reports on the Company activities and balance sheet at the Annual Meeting. The conclusion of the Supervisor is mandatory in the approval of the Company annual balance sheet.

17.2 Վերստուգողը Ընկերության գործունեության, տարեկան հաշվետվությունների և հաշվեկշռի ստուգման վերաբերյալ եզրակացությունը ներկայացնում է տարեկան ժողովին: Ընկերության տարեկան հաշվեկշռի հաստատման ժամանակ վերստուգողի եզրակացությունը պարտադիր է:

#### **18. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

18.1 Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Ընկերությունը վարում է հաշվապահական հաշվառում և ներկայացնում է ֆինանսական ու վիճակագրական հաշվետվություն:

18.2 Ընկերության գործադիր տնօրենը պատասխանատվություն է կրում Ընկերության հաշվապահական հաշվառման կազմակերպման, դրա վիճակի և հավաստիության, տարեկան հաշվետվության, ֆինանսական և վիճակագրական հաշվետվություններն օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված Կենտրոնական բանկին և պետական կառավարման այլ մարմիններին ժամանակին ներկայացնելու, ինչպես նաև Ընկերության բաժնետերերին, պարտատերերին և մամուլի ու զանգվածային լրատվության մյուս միջոցներին Ընկերության մասին տրամադրվող տեղեկությունների հավաստիության համար՝ օրենքին, այլ իրավական ակտերին և կանոնադրությանը համապատասխան:

18.3 Տարեկան ժողովի հաստատմանը ներկայացվող տարեկան հաշվետվության, տարեկան հաշվապահական հաշվեկշռի, շահույթների և վնասների հաշվի հավաստիությունը պետք է հաստատվի Ընկերության վերստուգողի եզրակացությամբ: Նշված փաստաթղթերը հրապարակելուց առաջ, պետք է ստուգվեն և դրանց հավաստիությունը պետք է հաստատվի Ընկերության և Ընկերության բաժնետերերի հետ ընդհանուր գույքային շահեր չունեցող աուդիտն իրականացնող անձի կողմից:

18.4 Ընկերության տարեկան հաշվետվությունը ենթակա է նախնական հաստատման Խորհրդի կողմից՝ տարեկան ժողովի գումարման ամսաթվից առնվազն 30 օր առաջ:

#### **18. THE ACCOUNTING AND FINANCIAL STATEMENT**

18.1 According to the procedure defined by the Legislation of the Republic of Armenia the Company shall maintain accounting and submit a financial and statistical report.

18.2 The Company Executive Director shall be responsible for organization of the accounting, its status and reliability, the timely submission of annual report, financial and statistical reports to the Central Bank and other public administration bodies stipulated by laws and other legal acts, as well as for truthfulness of Company-related information provided to the Company shareholders, creditors and the mass media as required by laws, other legal acts and the Charter.

18.3 The truthfulness of the annual report, annual balance sheet, profit and loss accounts of the Company, which are submitted to the Annual Meeting for approval, shall be confirmed by a conclusion of the Supervisory Board. Before publication, the mentioned documents shall be audited and their truthfulness shall be confirmed by the Auditor that has no common property interests with the Company and its shareholders.

18.4 The annual report of the Company shall be subject to the provisional approval by the least 30 days before the date of the Annual meeting.